ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հունիսի 2026 թվականի N 806 - Ն

ՖԻԹՆԵՍ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի «դ.18»-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել ֆիթնես կենտրոններին և մարզասրահներին ներկայացվող չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածի 10-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված պայմանագիրը գործող ֆիթնես կենտրոնները կամ մարզասրահները պետք է կնքեն սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամիս ժամկետում, իսկ նոր բացվող ֆիթնես կենտրոնները կամ մարզասրահները՝ բացվելուց հետո մեկ ամիս ժամկետում, որը կարող է երկարաձգվել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամիս տևողությամբ ժամկետի ավարտը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից մեկ տարի հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

05.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ